

Այդ կտրիճները յարութիւն պիտի առնեն յարգանքի դրախտին մէջ. ազգային երախտագիտութեամբ պիտի յաւելրժանան:

Հայրենի սէրը զինքը կը մղէ կտրիճութիւն հոսեցընելու հայուն երակներուն մէջ. չուգեր որ վհատի հայը: Հայրենիքի բաժին են ընկած սուգ, աւեր և ստրկութիւն. պէտք չէ ահաբեկիլ: Կը հաւատայ որ չի մեռնիր սուրբ գաղափարը, ասոր հաւատացողը անմահ է. կը խրախուսէ որ անբաղդ հայը անվհատ առաջ երթայ, փոյթ չէ, ինչէ խորտակուի հայուն նաւը, բաց ովկիանոսին մէջ. թող հայուն գլխին զայրանան ահեղաշունչ մորկիներ, և մոլեգին յորձանքը թո՛ղ թաղէ հայուն դին:

«Բայց հաւատո՛ւ, դու չես յաղթուած, ոչ ոյժն յաղթող — Եւ նոր քաղեր կ'իշենն անշուշտ քեզ յաւորողո՛ր»:

Ու պահ մը կը յուսահատի, տառապանքը գազանորէն կը խուժէր հայ երկրի վրայ, ոչխարի պէս խողիսողուող հայութեան հառաչը ամենի սոսկումով կը լսեցընէր մեծ վայնասունին գերեզմանապան ողբը: Հայը սպասեց, շատ սպասեց՝ որ վերջը գայ իր դարաւոր տառապանքներուն. և յոյսերու ամենէն վառ ժամանակներուն՝ արիւնի կատաղած ծովը կը ծածկէ հայութիւնը. ու բանաստեղծը իր յոյսը չուգեր կորսնցընել. կը սպասէ փայլուն օրերուն, կեանքի և յարութեան արշալոյսին:

«Եւ ըսպատու ենք, ըսպատու կրկին,
Որ արեան դաշտում փթըթին վարդեր,
Որ որոտացող թիպամած երկին
Երկրին ուղարկէ անձրեկ կենսաբեր...»

Ամբողջ յոյս է, ամբողջ խրախուս է հայուն համար կը հառաչէ. խրատներ կ'երգէ, կրօնական կրակը կ'արծարծէ:


*

Բարի սիրտ, պատրաստ է նկարելու մեր կեանքի սգաւոր պատկերը, գոյն չունի, ոյժ չունի, ջունչ չունի, բայց ունի յատկութիւն մը, բարձր գերապանծ յատկութիւն մը. Սիրտ: Կը սիրէ երգել մեր

կեանքը, կը սիրէ հայուն մարտիրոսացած հոգին, որուն ընծայած է իր քնարը:

Ռուսահայը կը սիրէ այս բանաստեղծը որուն քնարին վրայ չին դիտեր ձեւ, գեղարուեստ, հրապոյրը չեն զգար իր սաղէն: Բայց կը տեսնեն որ ազնուական Սիրտ մը կը տրոփէ իր քնարեղգութեան մէջ:

Ս.Ի.ԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ



Բանաստեղծը հոգեզմայլ ժպիտով ձեռքը նամակ մը ինծի մօտեցաւ, կը տեսնէք ինչ կը գրէ. կ'ըսէր ինծի. Նամակը վրէն. նայի յարգելի Մխիթարեանի մը ստորագրութիւնը կը կրէր. պարունակութիւնը ճոխ գովեստ մ'էր բանաստեղծին: Սուրճերնիս խմեցինք, և անցանք դուրս ելանք դռնէ մը, որուն վրայ «Աստ լուծին է պահելի» գրուած էր, կը ձեմնէք նոճի. ներու ուղիղ ճամբէն: Տժգոհ է բանաստեղծը. իր տեղացի մատուլը դեռ չէ ըմբռնած իր քնարին յարգը. դեռ նոր էր, «Հանդէս Ամսօրեայի», «Տարագի» և հին «Մուրճ»ի մէջ երկու երեք փոքր ու երկսող երթուածներովը չէր կրնար ժողովրդականաւ, մեր այդ տեսութիւնէն տասը տարի վերջը, հիմայ լոյս կը տեսնէ իր քերթուածներու կոկիկ մէկ հաւաքածոյն՝ 288 էջերէ կազմուած սիրուն գիրքը: Եւ արդէն այս վերջին տարիներու մէջ կովկասեան մամուլն ալ գնահատումի էջեր սկսած էր նուիրել բանաստեղծ իսահակեանի որուն ախորժելի է գովեստի համար:

*

Իր քերթուածներու շարքին մէջ, սրտի զպչող երգեր ու վէրքերը միայն իր ներքին հոգեկան հիւանդութեան հծծիւնը չեն, հոն խառնուած է հայութեան վէրքերուն ու երգերուն սեւ ու կարմիր գոյները: Բայց իրեն հետ կարելի չէ տխրիլ յուսահատիլ. իր հոգեկան վէրքը շատ խոր

է, ո՛չ ձեռք կը հասնի, ո՛չ միտք : Անձնատուր իր մերկածուփ յոռետեսութեան, տխուր նախերգանքով կը շարժէ իր ընտրին լարերը, մէկ քանի տողերով կ'ուռուակարէ իր ներքին պատկերը.

«Այսպէս, անորոշ, անձն' տեղեկութիւն
Ձգուած է հողիս հետէ, շատ հեռու :
Չխուր ու մոայն, ինչպէս մշուս — ծով,
Խուս հեծածուս է ակերի վերա...
Եւ ինչպէս երազ — և կայ, և չը կայ...»

Իր մէջ կը կոտլին շուարուամբ յուսահատութեան հետ, սէրը պատրանքին հետ : Յանկարծակի կը սթափի և ոգեւորուած, կը զարնէ սրտին լարերուն . ու սրտին խնդրը, կուրծքին թինդը սրբան կարճատեւ, ահա կը կտրին իր ցնարին լարերը : Եւ կը կարծէ, թէ միայն սիրոյ շարը կը մնայ սրտին անհուն խորքին մէջ. բայց խորուած է, իր երգերն են վկայ : Իր մէջ վարդ չի մնար, այլ անոր փուշը.

«Ախ, ալ — վարդի, սիրոյ վարդի
Ձոր փշերը մընացին...
Ինչ փշերը մասազ սիրաբան
Փերքեցին ու կերպան,
Խարմիր — կանաչ իմ օրերսս
Սիրոյ սգով սեպցան...
Ախ, ափսոս իմ գարուն կանքիս
Սիր փշերը մընացին...»

Եւ այդ փուշը սրտին մէջ ապրած է, կ'ապրի, կ'երազէ սիրել, երգել և իրեն հաճելի են մրմունջ և տրտունջ. իր սրտին վրայ պրկուած են երգ ու վերքի ոսկի լաւերն : Իրեն համար իր սիրտը երկինք է, այնտեղ ամէն արարած խորշ մ'ունի և աստղ.

« — Սիրտը երկինք է...
Բո՛ր կուտայ ծագելին,
Սէր կուտայ կոյնին,
Կեանք կու տայ անկեանք,
Ձոր անապատին —
Սմայի սրտին...
— Սիրտը երկինք է... »

Սիրտը զիշեր է, նազելի աչագեղին սէրը՝ վառ — անստղ : Այդ աստղը երբ սէր չունի, սիրտ ծակող է. բանաստեղծը միշտակ ապրելով, իր աստղը երկինքի վրայ կը թառամի. և յուսահատած կ'ուզէ որ ծովին խոր ծոցը իր գերեզմանն ըլլայ :

Ի՞նչ կարելի է ըսել իր ցնորքներուն և մորմոքներուն. պիտի չի վարանինք ըսելու, թէ դարձեալ կ'երազէ, տաք շուարումի մէջ կը տառապի, իր երգին վրայ գերազոյն գուրգուրանք մը կը զգայ, ան անտուն թռչնակ մըն է, որ ի գուր կը թռչի իր սիրող սրտէն, որքան թափառի, գլուխ դնելու տեղ չի գտներ, աշխարհը փուշ է, ամէն տեղ քար սիրտ, իր երգին համար վայելուչ տեղ չի կայ. իր երգը օտար թռչուն է, ժայռերու վրայ թափառական. իր երգը կեանք է և տանջանք, բայց անոր՝ ամէն ալ անզգայ են : Ուրեմն տարօրինակ գերբնական երգ մըն է որ կը թռչի իր ցնարէն :

Ո՛րքան բարձր կ'ըմբռնէ իր երգը : Կ'երազէ... Միամիտ երագներու ներողաւոր ըլլալու հետ, Կու լոյս, ու մենք վերան կը խղճանք. բռնաստեղծի լացը՝ սրբաւոր շատ կը զգչին, եթէ զգացմունքի բազմին մը կայ իր կուրծքին տակ. մորմոքի է իր այս լացը.

« Գագաթներին մով ոտքերի
Թափանցի սէրս լալով,
Լացըս քամին զով ոտքերի
Լրոնց, տարաւ թիկն տալով,
Ու լըսում եմ լուս գիշերին
Լացըս հիմա ամենուրեք
Միշտ ծնում է զուտը քամին,
Բայց չես լըսում նրան երբէք... »

Հնչուն համրոյրի՝ հասուն վարդէ շրթթունքները գինք կը խոտվեն, կը զգայ իր վշտահար սրտին յուսահատութիւնը : Յուսահատ է, վառ գի իր սրտի գարունը վաղուց մեռած է :

Խեղճ ցնորակոծ ցնար. իր նազելիին անուշ հոտով աշխարհս ղինովցած է. ինքը անկէ գրկուած է :

Մենաշրջիկ անապատին մէջ կ'ուզէ թափառիլ, կ'ուզէ ամայի անապատի մէջ տաք ժայռերը ամուր գրկած համրուել ու լալ : Սփոփանքի կարօտ է իր վշտահար սիրտը :

Ինտութեան մէջ կը սիրէ ինչ որ գերեզմանական է, լալկան պատկեր, տրիւրունի անըջանք : Իթէ ունինք կաթիլ մը փափուկ զգացմունք, եթէ ունինք գորովի

ցօղով ազնուացած հոգի մը, իսկոյն բլրան ուխտատեղին՝ կրօնական սարսուռ մը կը թափէ մեր երակներուն մէջ, մեր տեսած նոճիններու անտառէն մահուան հոտը առնոյ՜ կու գայ մեզի. և այսպէս Պ. Իսահակեանի համար քաղցը է ինչ որ տխուր հիացում է. իր պարտէզին մէջ ամէն զիւրեք կու լայ իր վշտատուցը ուռնին, և առաւօտեան կոյս արեւը իր նազելի ծամերով հէգ ուռնիին արցունքները կը սըրբէ: Ամէն բանաստեղծ ուռնիին երգ մըն է նուիրած, իսկ Իսահակեան իր քնարով անոր բիրեղ արտասուքը կը սրբէ: Աթէքքէթթի կ'ուզէր որ խարտեաշ կոյսը՝ գերեզմանին՝ սիրահարին հողաբլուրին այցելուն, քաղէր ծաղիկներ իր վարսերուն համար, և կ'իմացնէր, թէ այդ ծաղիկները մեռած երիտասարդի սրտէն ծեր են, թէ անոնք երգեր են, զոր չէ երգած երիտասարդը, այլ մտածած, անոնք հիւնալի խօսքեր են, զոր հետը գերեզման է տարած: Այդպիսի սիրուն անըջանք մը, եղբայրական գորովով սրբենի անըջանք մը կը համարիմ Իսահակեանի հետագայ երգը.

«Ես որ մեռնիմ ու իմ սրտից
Թէ մի ալ — վարդ դուք ծըլէր.
Ու ընկերքս հեռու տեղից
Գար, շերմըս այցելէր».

Ա. Թ. Նրբա խոր աչերից
Մի ցօղ վարդիս մէջ ձորէր. —
Այն սուրբ ցօղը սիրաբա կ'երթար,
Վէրքս խորունկ կը բուսէր քա:

Պ. Իսահակեան՝ զգացմունքին ամենէն անոյ՜ լարերը շարժած է. իր ցնորքներուն մէջ, վերջին ամենէն քնուշ ըզմանքն է ունենալ անպաճոյճ գերեզման մը, որուն վրայէն զան անցնին հեալով Մանթաշի հովիւրը, երջանիկ կ'ըլլայ, եթէ իր հոգարուրին չորս զին ցորենի արտեր ծփծփփան և ուռններն մազերնին արծակած՝ անուշ, անուշ լան իր վրան:

*

Մանինք ալ կը սիրէ, մամիկներու մանինքն ալ երգ են, քերթուածներ: Անոնց երգը հարազատ սէր, և զգացմունք

կը թափեն մեր սրտերուն մէջ: Ինչ վեհ հիացում է մօր սէրը. սիրտը որքան որ վշտահար, և խելագար մտքերը՝ որքան ալ խարազանած ըլլան բանաստեղծին հոգին, մօր սէրը անմոռանալի է. մօր գորովը վտարանդիին աչքէն արտասունք կը ցօղէ, սրտէն արին կը վազցընէ. բայց ամենէն աւելի բանաստեղծը կ'ըմբռնէ մօր կարօտին չարատանջ մորմոքումը: Պ. Իսահակեան վշտի, վէրքի երգիչը շատ դառն պիտի գտնէր մօրմէ հեռու տարազրութիւնը: Երգած է.

«Հայրենիքէս հեռացի եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Աղիք մօրէս բաժանուք եմ,
Տըխուր — աքլոտում, քուն չունիմ»:

Սարէն եկող հովերուն կը հարցնէ՝ լուր մը իր մօրմէ, ծովէն հասնող հովերուն կը հարցնէ «Ա՛խր բարեւ բերեր չէ՞ք»: Մօր տեսքին կարօտցեր է, կ'ուզէ երազ ըլլալ, թոչիլ մայրիկ ջանին մօտ: Ինչ սէրը ինչպէս յայտնել, կարօտը ինչպէս առնել.

«Ի՞նչ քունդդ գայ, լուր գիշերով,
Հողից զբոկեմ, համբոյր տամ.
Սրբադ կըգնիմ վառ կարօտով
Լամ ու իրեզմիմ, մայրիկ ջան...»

Աշուղներուն երգն ալ շատ սիրուն հընչած է Իսահակեանի սրտին մէջ: Անոնց հոգին հագեր է, անոնց զգացմունքը խմբ է, անոնց հառաչներով բոնկեր է, անոնց լացով լուացուեր է:

Աշուղի պէս բնութեան հետ կը խօսի, անոր իր վէրքերը կը բանայ, անկէ սփռփանք կը խնդրէ. Բնութիւնը իր մտերիմն է, սրտակից սիրելին: Կեանք, հոգի բերող կանաչութիւնը իր եղբայրն է, մանուշակով ծաղկած սարերէն՝ արտոյտն ու արօտ իրեն անոյ՜ ձայն կու տան. գարնան անուշ արևին հետ անոնք իրեն ձայն կու տան, որ սար ու ձոր ելլէ. և հոն դարձեալ իր մեռելական մեղեդին կ'երգէ. բնութիւնը իր բնիկ գեղեցկութեան մէջ է և անփոփոխ կ'ապրի. այլպէս, դաշտեր, վարդեր, սարեր, ձորեր առաջուան պէս գեղեցիկ են և սիրելի. մաղձոտ բանաս.

տեղծը սակայն իր մէջ գերեզման մը կը տեսնէ.

«Սարե՛ր ու ժորե՛ր, զոգը առաջանն է՛ր...
կ'երթամ փշէ մէջ, գերեզման կ'երթամ,
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ,
Ա՛խ, տանեմ սիրտըս, զնեմ գերեզման՝
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ
Ազիզ մեռելըս տանեմ հողին տամ...»

Էյ կանանց ախպէ՛ր, կու գաս զաւ տարի,
Ու գերեզմաննս մամուլ կը դուգես,
Իմ կանանց ախպէ՛ր, զաւրջ միշտ բարի,
Ինզէ գերեզմաննս մտաքէջ չը քըցես»:

Անմոռանալի Սայաթ — Նովայի փափ-
կանազ քնարը կը յիշենք իսահակեանի
հետագայ սողերովը.

«Շէմքդ եմ ընկած, ետր, խիզէ արա,
հողդ եմ լիզում սովի նըման,
Ետր, թէ մեռնիմ ոսկերուց տակ
շահին — շահի թախտ է ինձի,
Փէլըդ քըսի գերեզմանիս՝
փափագելի բաղդ է ինձի...»

Եւ աշուղի պէս գիտէ խոկալ, թէ ա-
մենայն ինչ ունայնութիւն է. յոռետեսու-
թեան գիրքը չէ որ կը համոզէ, այլ ի-
րականութիւնը ապացոյց է, թէ ամէն զեղ
ու վայելք, փառք ու պատիւ սնամէջ ե-
րազներ են: Եւ ինչ լաւ կը խորհրդածէ.

«Ախ, աշխարհը տուն է սրբի,
Հիմքը Նորա մահի վրայ.
Մարդն հողեզն խեղճ ճիճու է,
միշտ պիտ սողայ հողի վրայ.
Թէ Թազուր անյազթ լինի,
տերեւի պէս միշտ պիտ զոգայ,
Իսկը մարդուս ցաւ ու ցեց է,
— արեգակնեհս ո՛ր գնացին»:

Բանաստեղծը կ'ըմբռնէ թէ «Նրազի
պէս եկանք — կ'երթանք»: Արդեօք ծաղ-
րանկարը չե՞նք կոյր բաղդին...

*

Իսահակեան ունի՞ Նիցչէական ներշնչ-
չում. միայն փորձեր է ունենալ. վատ է
աշխարհս, պատրանք է ամենայն ինչ,
խաբերայ է սէրը, չկայ հաւատարմու-
թիւն, չկայ սփոփանք. իր յոռետես քնա-
րով իսահակեան երգած է հոգեկան թա-
խիծը, հառաչելով ողբացեր է իր տխու-
թեան գերեզմանը: Շատ լացեր է ու կու
լայ, վերքերը մարմորէի են, վշտերը շատ
սաստիկ ու սոսկալի ըմբռնած է: Առհա-

սարակ իր երգերուն նկարագիրը սրտա-
ճրմիկ ցաւն է. կարծես Ուիլմուսի յաւէր-
ժանրաբերը զինքը ապտակեր են, ու սըր-
տաբեկ կու լայ. լալ գիտէ ու հառաչել,
ու կը զարմանանք իր «Բագերը վայրի»
հրաշունչ երգին վրայ: Յանկարծակի
կուրծքը հրաբուխի պէս կը բռնկի, և
Նիցչէական կրակ մը կը ժայթքի իր քը-
նարէն, իրաւունք կու տայ մեծ վարպե-
տին Գերմարդկութեան քարոզիչ Նիցչէին,
ասոր այս խօսքը «Մի՛ գնար մարդկանց
մօտ — գնա անապատ զազաններու մօտ»
բնարան ընելով, կ'երգէ իսահակեան ըմ-
բռստութեան երգը: Մըրկի նման նժոյգի
վրայ նստած կը սլանայ նիրհած դաշտե-
րէն. երկնքին խորերը կը թռչի, սիրտը
կը բանայ անհունութեան, կ'ուզէ սու-
զուիլ գոռ մամպերու մէջ, ու կայծակ-
ներով կ'ուզէ զարնուիլ. կը հեռանայ զը-
ձուձ մարդկութենէն, ստրուկ աշխարհէն
կը հեռանայ. զզուելի են կեղծիք, դաւա-
ճանութիւն, ստուծիւն. ինչպէս ըմբռնած
է մարդուս գերբնական բարձրութիւնը .
ծծեր է Նիցչէի հիպագորուր շունչը, և
վճռած է.

«Աշխարհը չ'արժէ քու արտաստեղծին,
Եւ կ'ինն ու ընկեր՝ զզուանքիդ այդ ծով, —
Անապատ զննա՝ — սիրի՛ր վազերիդ,
Եւ այրիք անմահ արեւի սիրով...»

Բայց բանաստեղծին անապատը Հայաս-
տանի զրախտն է. անոր զաւառներուն
կ'այցեկէ, գրիչ ի ձեռին, մեր խուլ երկրի
անկիւնները ման կու գայ, ժողովրդական
երգեր կը լսէ: Ներհուն երգադրի կոմի-
տաս վարդապետը զմեզ զմայլեցուց բերե-
լով անոյշ ու հարազատ արձագանգը հայ-
կական կոյս երգերուն, անոնց քերթողա-
կան փափուկ նազելի շունչին թարգմանը
կ'ըլլայ իսահակեան. իր սրնգին անոյշ
շունչը Հայաստանի կուրծքէն կը ծծէ:

